**Հայտարարություն**

**«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի (այսուհետ՝ համակարգող) թափուր տեղն զբաղեցնելու համար**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) համակարգողի նշանակման կարգի համաձայն՝

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համակարգողի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր:

2. Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) բարձրագույն կրթությունը.

3) աշխատանքային ստաժը («Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան):

3. Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում (N 2 ձևին համապատասխան).

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ).

4) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

5) ինքնակենսագրություն:

4. Փաստաթղթերի բնօրինակները լիազոր մարմնին պետք է ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում, էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ lori.qartughar@mta.gov.am էլ. հասցեին (հեռ.0322-4-01-61): Հասցե՝ ք. Վանաձոր, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի վարչական շենք, Հայքի հրապարակ, 2026 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 18:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից: